Թողարկման 19-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2012

Հուլիս

թիվ 7 (167)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները վերաֆինանսավորման տոկոսադրույքի, «Ֆինանսական տեխնոլոգիաների լաբորատորիա» ՓԲԸ-ն և մի շարք բանկերի մասնաճյուղեր գրանցելու, ինչպես նաև «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» և «Մոբի դրամ» ՓԲԸ-ներին «Անելիք» և «Կոնտակտ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն տրամադրելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները մի խումբ ՍՊԸ-ների գրավատան կազմակերպման լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու, «Սթար Դիվայդ» ՓԲԸ-ի փոխանակման կետի մի շարք մասնաճյուղերի արտարժույթի առուվաճառքի և «Լեգատ Կրեդիտ» ՍՊԸ-ին գրավատան կազմակերպման լիցենզիաներ տրամադրելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 12 գրավատների, 3 ՓԲԸ-ների նկատմամբ տուգանք կիրառելու և 8 արտարժույթի փոխանակման կետերի, 2 ՓԲԸ-ների, 1 ԲԲԸ-ի, 1 ՍՊԸ-ի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 166-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մայիսի 15-ի թիվ 119-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

6 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 167-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 199-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

9 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 168-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

12 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 6 պաշտոնական պարզաբանումը «Վարկային բյուրոներին տրամադրվող տեղեկատվության մասին»

14 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 7 պաշտոնական պարզաբանումը ««Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի մասին»

17 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

- ***Անփոփոխ է թողնվել*** վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8% (որոշում թիվ 169Ա):

- ***Գրանցվել են*** «Ֆինանսական տեխնոլոգիաների լաբորատորիա» փակ բաժնետիրական ընկերությունը և «Կոնվերս բանկ», «ՊրոԿրեդիտ բանկ», «Յունիբանկ» փակ բաժնետիրական ընկերությունների, «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության համապատասխանաբար «Ավան-1» և «Արմավիր», «Քոչար», «Վանաձոր» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 170Ա, 1/646Ա, 1/652Ա, 1/687Ա, 1/759Ա):

- ***«Ամելիք» և «Կոնտակտ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» և «Մոբի դրամ» փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 180Ա, 181Ա):

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Նյու բրանչ» և «Պիրոպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գրավատան կազմակերպման լիցենզիաները (որոշումներ թիվ 184Ա, 193Ա):

- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ են տրամադրվել*** «Սթար Դիվայդ» փակ բաժնետիրական ընկերության փոխանակման կետի թիվ 9, 10, 11 մասնաճյուղերին (որոշումներ թիվ 190Ա, 191Ա, 192Ա):

- ***Գրավատան կազմակերպման լիցենզիա է տրամադրվել*** «Լեգատ Կրեդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 196Ա):

- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 12 գրավատների և 3 փակ բաժնետիրական ընկերությունների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 7040000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/639Ա-1/641Ա, 1/656Ա, 1/657Ա, 1/700, 1/701Ա, 1/713Ա-1/715Ա, 1/739Ա, 1/740Ա, 1/718Ա, 1/757Ա, 1/758Ա) և 8 արտարժույթի փոխանակման կետերի, 2 փակ, 1 բաց բաժնետիրական, 1 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/658Ա-1/662Ա, 1/673Ա, 1/746Ա, 1/747Ա, 1/716Ա, 1/717Ա, 1/738Ա, 1/756Ա):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մայիսի 15-ի թիվ 119-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մայիսի 15-ի «2012 - 2013 թթ. հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Սերգեյ Փարաջանով» հուշադրամը շրջանառության մեջ դնելու և դրա նկարագրությունը հաստատելու մասին» թիվ 119-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետում հուշադրամի բնութագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հուշադրամի բնութագիրը**

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	28,28 գ
Չափը	28,0 x 40,0 մմ
Դրամաշուրթը	հարթ
Որակը	պրուֆ
Տպաքանակը	մինչև 5555 հատ»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
28 հունիսի 2012 թ., Ն166-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. հունիսի 26-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 4.07.2012 թ. (ՀՀԳՏ N18 (431)[1], 17.07.2012):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 199-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով կազմակերպել առևտրային բանկերում թղթադրամների փաթեթավորման և վճարունակության ստուգումների գործառնությունների իրականացումը և անվտանգության ապահովումը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և 45-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 26-ի ««Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ը հաստատելու մասին» թիվ 199-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ի ենթահավելված 2-ը և ենթահավելված 13-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համապատասխանաբար համաձայն սույն որոշման Հավելված 1-ի և Հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
28 հունիսի 2012 թ., N167-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի հունիսի 26-ի թիվ 167-Ն որոշմամբ

Ենթահավելված 2

Հայաստանի Հանրապետության թղթադրամների վճարունակությունը որոշելու ցանցի տիպօրինակ

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. հունիսի 26-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 4.07.2012 թ. (ՀՀԳՏ N18 (431)[1], 17.07.2012):

Հայաստանի Հանրապետության թղթադրամների վճարունակությունը որոշող վանդակապատ ցանցերի չափերը

Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ	
Անվանական արժեքը	*Չափերը (մմ)*
500 դրամ (1999թ.)	129 x 72
1000 դրամ (1999թ.)	136 x 72
1000 դրամ (2001թ.)	136 x 72
1000 դրամ (2011թ.)	136 x 72
5000 դրամ (1999թ.)	143 x 72
5000 դրամ (2003թ.)	143 x 72
5000 դրամ (2009թ.)	143 x 72
5000 դրամ (2012թ.)	143 x 72
10000 դրամ (2003թ.)	150 X 72
10000 դրամ (2006թ.)	150 X 72
10000 դրամ (2008թ.)	150 X 72
10000 դրամ (2012թ.)	150 X 72
20000 դրամ (1999թ)	150 x 72
20000 դրամ (2007թ.)	155 x 72
20000 դրամ (2009թ.)	155 x 72
20000 դրամ (2012թ.)	155 x 72
50000 դրամ (2001թ.)	160 x 79
100000 դրամ (2009թ.)	160 x 72

Շրջանառությունից հետ կանչված թղթադրամներ	
Անվանական արժեքը	*Չափերը (մմ)*
10 դրամ (1993թ.)	125 x 62
25 դրամ (1993թ.)	125 x 62
50 դրամ (1993թ.)	125 x 62
50 դրամ (1998թ.)	122 x 65
100 դրամ (1993թ.)	135 x 65
100 դրամ (1998թ.)	122 x 65
200 դրամ (1993թ.)	135 x 65
500 դրամ (1993թ.)	135 x 65
1000 դրամ (1994թ.)	145 x 68
5000 դրամ (1995թ.)	145 x 71

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի հունիսի 26-ի թիվ 167-Ն որոշմամբ

Ենթահավելված 13

Հայաստանի Հանրապետության թղթադրամների արմատների փաթեթաթղթերի, կապոցների վրադիրների գույները և արմատների փաթեթաթղթերի չափերը

Դրամանիշերը ըստ անվանական արժեքների	Վրադիրի և փաթեթաթղթի գույները	Լայնությունը (մմ)	Երկարությունը (մմ)	Մեկ գծի լայնությունը (մմ)	Գծերի քանակը (հատ)
10 դրամ	դարչնագույն	45	220	4	1
25 դրամ	կարմիր	45	220	4	1
50 դրամ	կապույտ	45	230	4	1
100 դրամ	դարչնագույն	45	230	4	2
200 դրամ	կարմիր	45	240	4	2
500 դրամ	կանաչ	45	240	4	2
1000 դրամ	դարչնագույն	50	260	4	3
5000 դրամ	սև	50	260	4	1
10000 դրամ	կապույտ	57	290	10	2
20000 դրամ	նարնջագույն	55	260	10	1
50000 դրամ	մանուշակագույն	57	290	10	1
100000 դրամ	կանաչ	57	260	10	1

Հայաստանի Հանրապետության թղթադրամների կապոցների վրադիրների չափերը

Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ	
Անվանական արժեքը	*Չափերը (մմ)*
500 դրամ (1999թ.)	129 x 72
1000 դրամ (1999թ.)	136 x 72
1000 դրամ (2001թ.)	136 x 72
1000 դրամ (2011թ.)	136 x 72
5000 դրամ (1999թ.)	143 x 72
5000 դրամ (2003թ.)	143 x 72
5000 դրամ (2009թ.)	143 x 72
5000 դրամ (2012թ.)	143 x 72
10000 դրամ (2003թ.)	150 X 72
10000 դրամ (2006թ.)	150 X 72
10000 դրամ (2008թ.)	150 X 72
10000 դրամ (2012թ.)	150 X 72
20000 դրամ (1999թ)	150 x 72
20000 դրամ (2007թ.)	155 x 72
20000 դրամ (2009թ.)	155 x 72
20000 դրամ (2012թ.)	155 x 72
50000 դրամ (2001թ.)	160 x 79
100000 դրամ (2009թ.)	160 x 72

Շրջանառությունից հետ կանչված թղթադրամներ	
Անվանական արժեքը	*Չափերը (մմ)*
10 դրամ (1993թ.)	125 x 62
25 դրամ (1993թ.)	125 x 62
50 դրամ (1993թ.)	125 x 62
50 դրամ (1998թ.)	122 x 65
100 դրամ (1993թ.)	135 x 65
100 դրամ (1998թ.)	122 x 65
200 դրամ (1993թ.)	135 x 65
500 դրամ (1993թ.)	135 x 65
1000 դրամ (1994թ.)	145 x 68
5000 դրամ (1995թ.)	145 x 71

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 2) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգ 2-ի 8-րդ կետի «Կենտրոնական բանկում» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում (այսուհետ՝ Կենտրոնական բանկ)» բառերով:

2) Կանոնակարգ 2-ի 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18. Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը ($Ն2^1$ նորմատիվ) սահմանվում է 15 տոկոս:»:

3) Կանոնակարգ 2-ը լրացնել 18.1-րդ և 18.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«18.1. Բանկի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը ($Ն2^{11}$ նորմատիվ) սահմանվում է 4 տոկոս:

18.2. Այն դեպքում, երբ երկրորդ խմբի որևէ արտարժույթով արտահայտված պարտավորությունները ամսվա միջին օրական հաշվարկով գերազանցում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5 տոկոսը, ապա յուրաքանչյուր այդպիսի երկրորդ խմբի արտարժույթի համար տվյալ ամսվան հաջորդող ամսվա համար հաշվարկվում է $Ն2^{12}$ նորմատիվ, որն իրենից ներկայացնում է ԱՄՆ դոլարով, եվրոյով և այդ արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների ու ԱՄՆ դոլարով, եվրոյով և այդ արտարժույթով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև հարաբերակցություն: $Ն2^{12}$ նորմատիվի նվազագույն մեծությունը սահմանվում է 4 տոկոս:»:

4) Կանոնակարգ 2-ի 19-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«19. Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը ($Ն2^2$ նորմատիվ) սահմանվում է 60 տոկոս:»:

5) Կանոնակարգ 2-ը լրացնել 19.1-րդ և 19.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«19.1. Բանկի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը ($Ն2^{21}$ նորմատիվ) սահմանվում է 10 տոկոս:

19.2. Այն դեպքում, երբ երկրորդ խմբի որևէ արտարժույթով արտահայտված պարտավորությունները ամսվա միջին օրական հաշվարկով գերազանցում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5 տոկոսը, ապա յուրաքանչյուր այդպիսի երկրորդ խմբի արտարժույթի համար տվյալ ամսվան հաջորդող ամսվա համար հաշվարկվում է $Ն2^{22}$ նորմատիվ, որն իրենից ներկայացնում է ԱՄՆ դոլարով, եվրոյով և այդ արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների ու ԱՄՆ դոլարով, եվրոյով և այդ արտարժույթով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև հարաբերակցություն: $Ն2^{22}$ նորմատիվի նվազագույն մեծությունը սահմանվում է 10 տոկոս:»:

6) Կանոնակարգ 2-ի 25-րդ կետում «$Ն2^1$, $Ն2^2$,» բառերը փոխարինել «$Ն2^1$, $Ն2^{11}$, $Ն2^{12}$, $Ն2^2$, $Ն2^{21}$, $Ն2^{22}$,» բառերով:

7) Կանոնակարգ 2-ի 33-րդ կետում «Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների» բառերը փոխարինել «Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների» բառերով:

8) Կանոնակարգ 2-ը լրացնել 33.1-րդ և 33.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. հունիսի 26-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 4.07.2012 թ. (ՀՀԳՏ N18 (431)[1], 17.07.2012):

«33.1. Ն2^{11} նորմատիվը հաշվարկվում է Ն2^{1} նորմատիվի համար սահմանված բանաձևով, ընդ որում, բարձր իրացվելի ակտիվների մեջ ներառվում են միայն առաջին խմբի արտարժույթներով արտահայտված՝ սույն կանոնակարգի 34-րդ կետով սահմանված բարձր իրացվելի ակտիվները, իսկ ընդհանուր ակտիվների մեջ՝ «ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի» «Ակտիվներ» կարգի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բոլոր հաշիվների հանրագումարը՝ հաշվի առնելով սույն կանոնակարգի 34.10-րդ կետով սահմանված նվազեցումները:

33.2. Ն2^{12} նորմատիվը հաշվարկվում է Ն21 նորմատիվի համար սահմանված բանաձևով, ընդ որում, բարձր իրացվելի ակտիվների մեջ ներառվում են միայն սույն կանոնակարգի 18.2-րդ կետում նշված ԱՄՆ դոլարով, եվրոյով և համապատասխան երկրորդ խմբի արտարժույթով արտահայտված՝ սույն կանոնակարգի 34-րդ կետով սահմանված բարձր իրացվելի ակտիվները, իսկ ընդհանուր ակտիվների մեջ՝ «ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի» «Ակտիվներ» կարգի՝ ԱՄՆ դոլարով, եվրոյով և համապատասխան երկրորդ խմբի արտարժույթով արտահայտված բոլոր հաշիվների հանրագումարը՝ հաշվի առնելով սույն կանոնակարգի 34.10-րդ կետով սահմանված նվազեցումները:»:

9) Կանոնակարգ 2-ի 34.8-րդ կետում

ա. առաջին պարբերությունը լրացնել նոր նախադասություններով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, Ն2^{11} և Ն2^{21} նորմատիվների հաշվարկում ընդգրկվում են միայն այն թղթակցային հաշիվները, որոնք արտահայտված են առաջին խմբի արտարժույթով՝ նվազեցրած առաջին խմբի արտարժույթով արտահատված՝ սույն կետում նշված պարտավորությունների չափով: Իսկ Ն2^{12} և Ն2^{22} նորմատիվների հաշվարկում ընդգրկվում են.

1) այն թղթակցային հաշիվները, որոնք արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով՝ նվազեցրած ԱՄՆ դոլարով և եվրոյով արտահատված՝ սույն կետում նշված պարտավորությունների չափով, և

2) այն թղթակցային հաշիվները, որոնք արտահայտված են երկրորդ խմբի տվյալ արժույթով՝ նվազեցրած նույն արտարժույթով արտահատված՝ սույն կետում նշված պարտավորությունների չափով:»:

բ. երկրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

10) Կանոնակարգ 2-ը լրացնել 34.10-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«34.10. Ն2^{1} նորմատիվի հաշվարկման նպատակով բանկի ընդհանուր ակտիվների ($Ա_{ընդ}$) հաշվարկում ընդգրկվում է «ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի» «Ակտիվներ» կարգի բոլոր արժույթներով արտահայտված հաշիվների հանրագումարը: Ն2^{1}, Ն2^{11} և Ն2^{12} նորմատիվների հաշվարկման նպատակով ընդհանուր ակտիվների հանրագումարը պակասեցվում է.

1) Այն ակտիվների հաշվեկշռային արժեքի չափով (ապահովված մասով), որոնք ապահովված են հետևյալ միջոցներով.

ա. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից թողարկված փոխանցելի մուրհակներով, որոնց մինչև մարումն ընկած ժամանակահատվածը մինչև 1 տարի է և որոնք ենթակա են պարտադիր վճարման Կենտրոնական բանկի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության գանձապետական միասնական հաշվի միջոցներից,

բ. Կենտրոնական բանկի թողարկած արժեթղթերով և Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմսերով,

գ. տվյալ բանկում պահվող բանկային ոսկով,

դ. տվյալ բանկի բանկային և (կամ) ավանդային հաշիվներում հաշվառվող Հայաստանի Հանրապետության դրամով, առաջին խմբի մեջ մտնող արտարժութային միջոցներով,

ե. տվյալ բանկի բանկային և (կամ) ավանդային հաշիվներում հաշվառվող երկրորդ խմբի մեջ մտնող արտարժութային միջոցներով, եթե վերջիններս հանդիսանում են միևնույն արտարժույթով արտահայտված ակտիվների ապահովում: Ընդ որում, Ն2^{12} նորմատիվի հաշվարկման նպատակով ընդհանուր ակտիվներից նվազեցման են ենթակա երկրորդ խմբի մեջ մտնող արժույթով արտահայտված միայն այն ակտիվները, որոնք ապահովված են տվյալ բանկի բանկային և (կամ) ավանդային հաշիվներում հաշվառվող ԱՄՆ դոլարով, եվրոյով կամ տվյալ երկրորդ խմբի արտարժույթով:

2) Համապատասխան արժույթով արտահայտված այն վարկերի գումարի հաշվեկշռային արժեքի չափով, որոնք տրամադրվել են օտարերկրյա բանկերից և ֆինանսական կազմակերպություններից նպատակային կարգով ներգրավված միջոցների հաշվին, որոնց վերադարձն ապահովված է Հայաստանի Հանրապետության կառավարության կամ Կենտրոնական բանկի երաշխավորությամբ, դրանց տրամադրման ժամկետները չեն գերազանցում ներգրավման ժամկետները, և բանկը դրանց գծով չի ստանձնել լրացուցիչ ռիսկեր:

3) Սույն կանոնակարգի 34.8-րդ կետի համաձայն, համապատասխան նորմատիվի հաշվարկման նպատակով թղթակցային «նոստրո» հաշիվներից նվազեցվող գումարների չափով:

4) Բարձր իրացվելի ակտիվների հաշվարկում չընդգրկվող՝ Կենտրոնական բանկի թղթակցային հաշիվներում հաշվառվող «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում վարկային ռեսուրսների հարթակում կնքված մեկ աշխատանքային օրանոց (օվերնայթ) վարկային պայմանագրերով ներգրավված միջոցների չափով, ռեպո համաձայնագրերով վաճառված, ինչպես նաև գրավադրված՝ սույն կանոնակարգի 34.4-րդ, 34.5-րդ, 34.6-րդ, 34.7-րդ և 34.9-րդ կետերով սահմանված արժեթղթերի գումարի չափով (համապատասխան արժույթով):»:

11) Կանոնակարգ 2-ի 35-րդ կետում «Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների» բառերը փոխարինել «Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների» բառերով:

12) Կանոնակարգ 2-ը լրացնել 35.1-րդ և 35.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«35.1. $Ն2^{21}$ նորմատիվը հաշվարկվում է $Ն2^{2}$ նորմատիվի համար սահմանված բանաձևով, ընդ որում, բարձր իրացվելի ակտիվների մեջ ներառվում են միայն առաջին խմբի արտարժույթով արտահայտված՝ սույն կանոնակարգի 34-րդ կետով սահմանված բարձր իրացվելի ակտիվները, իսկ ցպահանջ պարտավորությունների մեջ՝ սույն կանոնակարգի 36-րդ կետով սահմանված՝ առաջին խմբի արտարժույթով արտահայտված ցպահանջ պարտավորությունները: Ընդ որում, սույն կետում նշված ցպահանջ պարտավորություններից նվազեցվում են 34.8-րդ կետի համաձայն թղթակցային «նոստրո» հաշիվներից նվազեցվող ցպահանջ պարտավորությունները (ներառյալ՝ դրանց գծով հաշվեգրված տոկոսները):

35.2. $Ն2^{22}$ նորմատիվը հաշվարկվում է $Ն2^{2}$ նորմատիվի համար սահմանված բանաձևով, ընդ որում, բարձր իրացվելի ակտիվների մեջ ներառվում են միայն սույն կանոնակարգի 18.2-րդ կետում նշված ԱՄՆ դոլարով, եվրոյով և համապատասխան երկրորդ խմբի արտարժույթով արտահայտված՝ սույն կանոնակարգի 34-րդ կետով սահմանված բարձր իրացվելի ակտիվները, իսկ ցպահանջ պարտավորությունների մեջ՝ սույն կանոնակարգի 36-րդ կետով սահմանված՝ ԱՄՆ դոլարով, եվրոյով և համապատասխան երկրորդ խմբի արտարժույթով արտահայտված ցպահանջ պարտավորությունները: Ընդ որում, սույն կետում նշված ցպահանջ պարտավորություններից նվազեցվում են 34.8-րդ կետի համաձայն թղթակցային «նոստրո» հաշիվներից նվազեցվող ցպահանջ պարտավորությունները (ներառյալ՝ դրանց գծով հաշվեգրված տոկոսները):»:

13) Կանոնակարգ 2-ի 36-րդ կետի առաջին նախադասության մեջ «հաշվեկշռի «Պարտավորություններ» կարգում հաշվառվող ցպահանջ կամ մարման սահմանված ժամկետ չունեցող միջոցները» բառերը փոխարինել «հաշվեկշռի «Պարտավորություններ» կարգում հաշվառվող համապատասխան արժույթով ցպահանջ կամ մարման սահմանված ժամկետ չունեցող միջոցները» բառերով:

14) Կանոնակարգ 2-ի 36-րդ կետի երկրորդ նախադասության մեջ «Ընդ որում, ցպահանջ պարտավորություններից» բառերը փոխարինել «Ընդ որում, համապատասխան արժույթով ցպահանջ պարտավորություններից» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 1-ին կետի 2 - 14-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
28 հունիսի 2012 թ., N168-Ն

Վարկային բյուրոներին տրամադրվող տեղեկատվության մասին[*]

Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեության հետ առնչվող սուբյեկտների կողմից պարզաբանման ակնկալիքով բարձրացվել է այն հարցը, թե հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող անձանց կողմից իրենց հաճախորդների կողմից օգտագործված ծառայությունների դիմաց վճարումների, պարտքերի, վճարումների սովորությունների կամ պարտավորությունների կամ դրանց կատարման մասին տեղեկությունների բացահայտումը «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված վարկային բյուրոներին, ինչպես նաև «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը արդյո՞ք չեն հակասում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջին:

Բարձրացված խնդրի տեսանկյունից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը անհրաժեշտ է համարում՝

1. անդրադառնալ հետևյալ օրենսդրական դրույթներին.

• Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկատվության տրամադրումը, եթե դա խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը:

• Համաձայն «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի՝ տեղեկատվության տրամադրողների և այլ անձանց կողմից վարկային բյուրոյին վարկային տեղեկատվության կամ այլ տվյալների տրամադրման համար վարկային տեղեկատվության սուբյեկտի համաձայնությունը չի պահանջվում, և այդպիսի տվյալների տրամադրումը վարկային բյուրոներին չի համարվում բանկային, առևտրային կամ այլ գաղտնիքի տրամադրում կամ հրապարակում, բացառությամբ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկությունների:

2. Հաշվի առնել այն հանգամանքը, որ հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեության հետ առնչվող սուբյեկտների գործունեությունը կարգավորող որոշ օրենքներում բացակայում են այդ սուբյեկտների կողմից վարկային բյուրոներին «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում նախատեսված վարկային տեղեկատվության տրամադրումը արգելող դրույթները:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը, ուսումնասիրելով նշված դրույթները, գտնում է, որ.

1. Որպես տեղեկատվությունը տրամադրելու արգելք՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը նախատեսում է այն դեպքը, երբ այդպիսի տրամադրումը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը: Սակայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կարծիքով «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով օրենսդիրը հստակ սահմանում է, որ տեղեկատվություն տրամադրողների և այլ անձանց կողմից վարկային բյուրոյին վարկային տեղեկատվության կամ այլ տվյալների տրամադրումը վարկային բյուրոներին չի համարվում բանկային, առևտրային կամ այլ գաղտնիքի տրամադրում կամ հրապարակում՝ այդպիսով վերացնելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի վկայակոչմամբ տեղեկատվության տրամադրման արգելքը՝ բացառությամբ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկությունների:

2. Այդ տրամաբանությունը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ օրենսդրությամբ որոշ դեպքերում սահմանվում է վարկային բյուրոներին իրենց հաճախորդների վերաբերյալ խնդրո առարկա տեղեկատվության տրամադրման՝ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող անձանց հստակ իրավասություն: Օրինակ՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. հունիսի 26-ին (ՀՀՊՏ N19(432), 1.08.2012):

օրենքի 49-րդ հոդվածի 2.1-րդ մասի համաձայն՝ օպերատորը կամ ծառայություններ մատուցողը իրավասու է բացահայտելու իր հաճախորդների կողմից օգտագործված ծառայությունների դիմաց վճարումների, պարտքերի, վճարումների սովորությունների կամ պարտավորությունների կամ դրանց կատարման մասին տեղեկություններ «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված վարկային բյուրոներին՝ այդ օրենքով նախատեսված կարգով և սահմաններում: Նշված տրամաբանության շարունակությունը պետք է համարել նաև այն, որ որոշ դեպքերում էլ հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեության հետ առնչվող սուբյեկտների գործունեությունը կարգավորող օրենքներում ուղղակի նախատեսված չեն վարկային բյուրոներին վարկային տեղեկատվության տրամադրման իրավասությունը նախատեսող դրույթներ, սակայն այդպիսի իրավասության մասին կարելի է եզրակացնել հենց նույն օրենքների կարգավորումներից: Օրինակ՝ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն գործունեության լիցենզիա ունեցող անձը պարտավոր է իր գործունեությունն իրականացնել տվյալ օրենքին, *Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, այլ իրավական ակտերին համապատասխան* կամ օրինակ, Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետությունում ջրային հարաբերությունները կարգավորվում են տվյալ օրենսգրքով, *օրենքներով և իրավական այլ ակտերով*: Այսինքն՝ նշվածը նշանակում է, որ գործունեության լիցենզիա ունեցող անձի գործունեությունը կարգավորող հիմնական իրավական ակտում վարկային բյուրոյին վարկային տեղեկատվության տրամադրման վերաբերյալ դրույթների բացակայությունը չի կարող դիտարկվել այդպիսի իրավասության բացակայություն կամ վարկային տեղեկատվության տրամադրման արգելք այն պարագայում, երբ «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է այդպիսի սուբյեկտների կողմից վարկային տեղեկատվության տրամադրում վարկային բյուրոներին:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը ***պաշտոնապես պարզաբանում է***.

Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող անձանց կողմից իրենց հաճախորդների կողմից օգտագործված ծառայությունների դիմաց վճարումների, պարտքերի, վճարումների սովորությունների կամ պարտավորությունների կամ դրանց կատարման մասին տեղեկությունների բացահայտումը «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված վարկային բյուրոներին՝ այդ օրենքով նախատեսված կարգով և սահմաններում, չի հակասում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
12 հուլիսի 2012 թ., N6

*«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի մասին**

Ապահովագրական շուկայի հետ առնչվող սուբյեկտների կողմից բարձրացվել է խնդիր, որը վերաբերում է այն դեպքին, երբ ԱՊՊԱ պայմանագրի համաձայն կամ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ կողմից հատուցված գումարի (այսուհետ՝ ԱՊՊԱ հատուցում) չափը փոքր է պատճառված վնասից (այսուհետ՝ նաև Ընդհանուր վնաս): Հարցադրումը վերաբերում է ԱՊՊԱ հատուցում ստանալուց հետո պատճառված վնասի չհատուցված մասով (այսուհետ՝ նաև Վնասի մնացած մաս) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով սահմանված դասով ապահովագրության կամավոր պայմանագրով կամ տուժողի՝ իր կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասների ապահովագրության պայմանագրով (այսուհետ՝ Այլ պայմանագիր) հատուցում ստանալու դեպքում դրանով սահմանված չհատուցվող գումարի (այսուհետ՝ նաև Ֆրանշիզա) կիրառման կարգին: Մասնավորապես, արդյո՞ք Ֆրանշիզան պետք է կիրառվի Այլ պայմանագրով ապահովագրական ընկերության կողմից վճարման ենթակա գումարի և ԱՊՊԱ հատուցման գումարի տարբերության նկատմամբ, թե Այլ պայմանագրի հիման վրա վճարման ենթակա գումարի նկատմամբ՝ առանց հաշվի առնելու ԱՊՊԱ հատուցումը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) բարձրացված խնդրի տեսանկյունից անհրաժեշտ է համարում վկայակոչել հետևյալ դրույթները.

- «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 8-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ապահովագրական հատուցումն առաջին հերթին կատարվում է ԱՊՊԱ պայմանագրի հիման վրա կամ Օրենքով նախատեսված դեպքերում Բյուրոյի կողմից՝ անկախ ապահովագրական պատահարում վնաս պատճառած անձի՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով սահմանված դասով ապահովագրության կամավոր պայմանագիր ունենալու կամ տուժողի՝ իր կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասների ապահովագրության պայմանագիր ունենալու հանգամանքից:
- Քաղաքացիական օրենսգրքի 1003.1-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն ապահովագրական ընկերությունն իրավունք ունի նվազեցնելու կամ մերժելու ապահովագրական պայմանագրով վճարման ենթակա ապահովագրական հատուցման վճարումը, եթե՝

- ապահովադիրը հատուցում է ստացել երրորդ անձից, որը պատասխանատու է պատճառված վնասի համար այն չափով, որքանով հատուցում ստացվել է վնաս պատճառած անձից.

- առկա են ապահովագրական հատուցման վճարումը նվազեցնելու կամ մերժելու՝ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ հիմքեր:

Ուսումնասիրելով վկայակոչված դրույթները՝ Խորհուրդը գտնում է, որ.

- Քաղաքացիական օրենսգրքի 1003.1-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումից երևում է, որ Այլ պայմանագրի հիման վրա հատուցում իրականացնելու համար ապահովագրական ընկերությունը պետք է նախ որոշի (այդ թվում՝ Ֆրանշիզա կիրառելով) Այլ պայմանագրով վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը, և հետո միայն օրենքով կամ պայմանագրով հատուցումը նվազեցնելու հիմքեր նախատեսված լինելու դեպքում՝ նվազեցնի այն:
- Ավելին՝ օրենսգրքի 1003.1 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի ձևակերպումից հստակ երևում է, որ ապահովագրական ընկերությունը պետք է նախ որոշի ապահովագրության պայմանագրի համաձայն (այդ թվում՝ Ֆրանշիզայի կիրառմամբ) իր կողմից վճարվելիք ապահովագրական հատուցման չափը, հետո նոր միայն վնաս պատճառողի կողմից ապահովադրին հատուցում տրված լինելու դեպքում, տրված հատուց-

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. հուլիսի 24-ին (ՀՀՊՏ N20(433), 8.08.2012):

ման չափով նվազեցնի իր կողմից վճարվելիք ապահովագրական հատուցումը: Ընդ որում, Խորհուրդը գտնում է, որ այս դրույթն օրենսդիրը սահմանել է շահառուի անհիմն հարստացումը բացառելու նկատառումներով: Հետևաբար, Խորհուրդը գտնում է, որ Օրենսգրքի 1003.1 հոդվածում կիրառված տրամաբանությունը լիովին կիրառելի է նաև խնդրո առարկա դեպքի նկատմամբ, և Այլ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունն այդպես պետք է իրականացնի իր կողմից վճարվելիք ապահովագրական հատուցման նվազեցումն ԱՊՊԱ հատուցման այն չափով, որքանով ԱՊՊԱ և Այլ պայմանագրով հատուցումների հանրագումարը կգերազանցի Ընդհանուր վնասը:

Օրինակ՝ ենթադրենք տուժողին պատճառված վնասը գնահատվել է 100 միավոր: Վերջինս 60 միավորի չափով ստացել է ԱՊՊԱ հատուցում: Վնասի մնացած մասով հատուցում ստանալու նպատակով դիմել է իր հետ Այլ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությանը, որի համաձայն ապահովագրական գումարը կազմում է 150 միավոր, Ֆրանշիզան՝ 50 միավոր: Այս դեպքում Այլ պայմանագրով հատուցվում է վնասի մնացած 40 միավորն ամբողջությամբ (անկախ Ֆրանշիզայի տեսակից):

Մեկ այլ օրինակ՝ երբ Այլ պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը փոքր է Ընդհանուր վնասից, իսկ Ֆրանշիզան մեծ է ԱՊՊԱ հատուցումից: Ենթադրենք տուժողին պատճառված վնասը գնահատվել է 200 միավոր: Վերջինս 70 միավորի չափով ստացել է ԱՊՊԱ հատուցում: Այլ պայմանագրով ապահովագրական գումարը կազմում է 180 միավոր, Ֆրանշիզան՝ 80 միավոր: Այս դեպքում Այլ պայմանագրով հատուցումը ոչ պայմանական Ֆրանշիզայի դեպքում կկազմի 100 միավոր, իսկ պայմանականի դեպքում՝ 130 միավոր:

Մեկ այլ օրինակ՝ կապված Այլ պայմանագրով համամասնության սկզբունքի կիրառման հետ. մեքենայի արժեքը գնահատվել է 700 միավոր: Այլ պայմանագրով մեքենան ապահովագրվել է արժեքի 50 տոկոսի չափով, իսկ Ֆրանշիզան սահմանվել է 100 միավորի չափով: Տուժողին պատճառված վնասը գնահատվել է 600 միավոր: Վերջինս 120 միավորի չափով ստացել է ԱՊՊԱ հատուցում: Այս դեպքում Այլ պայմանագրով հատուցում իրականացնող կազմակերպությունը ոչ պայմանական Ֆրանշիզայի դեպքում հատուցում է 200 միավոր, պայմանականի դեպքում՝ 300 միավոր:

Իսկ այն դեպքում, երբ վերը նշված բոլոր պայմանները նույնն են, իսկ ԱՊՊԱ հատուցումը կազմել է 520 միավոր, ապա Այլ պայմանագրով հատուցումը ինչպես ոչ պայմանական, այնպես էլ պայմանական Ֆրանշիզայի դեպքում կկազմի 80 միավոր:

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով և միաժամանակ նկատի ունենալով ապահովագրական շուկայում սպառողների շահերի պաշտպանության անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի վերաբերյալ ***պաշտոնապես պարզաբանում է.***

Այլ պայմանագրով Ֆրանշիզա նախատեսված լինելու դեպքում այն պետք է կիրառվի Այլ պայմանագրի հիման վրա վճարման ենթակա գումարի նկատմամբ՝ առանց հաշվի առնելու ԱՊՊԱ հատուցումը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
26 հուլիսի 2012 թ., N 7

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒԼԻՍ 2012)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2012 թվականի օգոստոսի 7-ի նիստի «2012 թվականի օգոստոսի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2012 թվականի օգոստոսի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 21
Իրական հատվածի ցուցանիշներ 24
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների ինդեքսներ
Գնաճ
Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 27
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 32
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 33
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 44
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 64
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 77
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 79
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 85
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (07.08.2012)

2012 թվականի օգոստոսի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2012 թվականի օգոստոսի 7-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահի տեղակալ Ն. Երիցյանը, խորհրդի անդամներ Ա. Մկրտչյանը, Ա. Չիլինգարյանը, Օ. Աղասյանը, Վ. Աբրահամյանը

Խորհրդի նիստը սկսվեց հուլիսի վերջի դրությամբ Իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ: Քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների զարգացումները:

2012 թվականի հուլիսին արձանագրվել է 1.5% գնանկում, ինչի արդյունքում 12-ամսյա գնաճը բարձրացել է մինչև 2.3%՝ մոտենալով տատանումների թույլատրելի միջակայքի ստորին սահմանին: Հուլիսին ևս արձանագրված գնանկումն ամբողջությամբ պայմանավորվել է պարենային ապրանքների գների սեզոնային անկմամբ (նպաստումը ընդհանուր գնաճին՝ 1.5 տոկոսային կետ), այն դեպքում, երբ ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների գները մնացել են գրեթե անփոփոխ: Պարենային ապրանքների կառուցվածքում շարունակել են զգալիորեն նվազել «Բանջարեղեն և կարտոֆիլ» ապրանքախմբի գները՝ 24.4%-ով (նպաստումը՝ 1.5 տոկոսային կետ): Այս պարագայում հուլիսին 12-ամսյա բնականոն գնաճը պահպանվում է գնաճի նպատակային ցուցանիշին մոտ մակարդակում՝ կազմելով 3.2%:

Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2012 թվականի հունվար-հունիսին՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 7.8%: Առաջին կիսամյակի արդյունքներով տնտեսական ակտիվության աճը կրկին պայմանավորվել է արդյունաբերության, գյուղատնտեսության և ծառայությունների ճյուղերի թողարկման ծավալների աճով՝ համապատասխանաբար 13%-ով, 8.1%-ով և 5.5%-ով: Շինարարության ճյուղում պահպանվել է անկման միտումը՝ կազմելով 6.7%:

2012 թ. հունվար-հունիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, արտահանումը (ըստ առևտրի վիճակագրության՝ ՖՕԲ) ավելացել է 13.5%-ով, իսկ ներմուծումը (ըստ առևտրի վիճակագրության՝ ՍԻՖ)՝ 6.7%-ով: Ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքը նույն ժամանակահատվածում աճել է տ/տ 8.1%-ով:

2012 թվականի առաջին կիսամյակի արդյունքներով՝ ՀՀ տնտեսությունում մասնավոր ծախսումների զարգացումները, ընդհանուր առմամբ, համահունչ են եղել ԴՎՔ ծրագրում նախանշված բազային սցենարի զարգացումներին, սակայն դրա կառուցվածքում մասնավոր սպառման աճն ավելի բարձր է եղել սպասվածից, իսկ մասնավոր ներդրումների անկումը՝ ավելի խորը: Համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը առաջին կիսամյակում եղել է չեզոք՝ պայմանավորված պետական ծախսերի զսպող և եկամուտների գրեթե նույնքան ընդլայնող ազդեցությամբ:

Խորհրդի նիստում ներկայացվեցին նաև ֆինանսական շուկայի զարգացումները: Հուլիսին, 12-ամսյա գնաճի ձևավորված բավականին ցածր մակարդակի պարագայում, ԿԲ-ն կրկին անփոփոխ է թողել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ հաշվի առնելով դրամավարկային պայմանների արդեն իսկ թուլացում դիտվող՝ դրամի արժեզրկման շարունակականությունը հունիսին ևս (4%), ինչպես նաև 12-ամսյա բնականոն գնաճի համեմատաբար բարձր մակարդակը: Ֆինանսական շուկան դրան արձագան-

քել է շուկայական տոկոսադրույքների ինչ-որ չափով կայուն մակարդակների պահպանմամբ: Արդյունքում, միջբանկային ռեպո միջին ամսական տոկոսադրույքը կազմել է 10.4%, մինչև 1 տարի մարման ժամկետով պետական պարտատոմսերի առաջնային շուկայում միջին տոկոսադրույքը՝ 9.1%, բորսայական միջբանկային վարկերի միջին տոկոսադրույքը՝ 9.2%:

ՀՀ արտարժույթի շուկայում հուլիսին դիտվել է դրամի արժևորում. նախորդ ամսվա միջինի համեմատությամբ, ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամն արժևորվել է 0.5%-ով՝ կազմելով 412.6 դրամ, եվրոյի նկատմամբ՝ 2.6%-ով՝ կազմելով 506.7 դրամ, ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է 0.8%-ով՝ կազմելով 12.7 դրամ:

Մակրոտնտեսական նկարագրված զարգացումների ներքո հուլիսին ձևավորվել է դրամավարկային հետևյալ միջավայրը. 12-ամսյա կտրվածքով փողի և դրամային զանգվածները համապատասխանաբար աճել են 22.1% և 19.3%-ով, որոնց կառուցվածքում դրամային ավանդների տ/տ աճը կազմել է 24.2%: Արտարժութային ավանդները հուլիսին աճել են տ/տ 26%-ով (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը՝ 12.1%), ինչի հետևանքով դոլարայնացման մակարդակն ավելացել է 3.2%-ով: Հուլիսին շարունակել են բարձր տեմպերով աճել տնտեսությանը տրամադրված վարկերը (տ/տ 34.7%-ով), որի կառուցվածքում գերակշռող են մնում արտարժութային վարկերը:

Իրավիճակային հաշվետվության քննարկումից հետո խորհուրդը սկսեց քննարկումներն արտաքին և ներքին մակրոտնտեսական զարգացումների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ:

2012 թ. հուլիսին հիմնական հումքային ապրանքների միջազգային շուկայում դրսևորվել են թույլ գնանկումային ու կայունացման, իսկ պարենային ապրանքների միջազգային շուկայում՝ որոշակի գնաճային միտումներ:

